ԱՐՑԱԽԵԱՆ ՕՐԱԳԻՐ

Արցախի լարուած մթնոլորտին վերջին օրերը ոչ մի փոփոխութիւն չբերեցին։ Թւում է թէ ընդհակառակը, առաջիկայ մի քանի օրերին իրադրութիւնը մարզում կարող է հասնել կտրուկ շիկացման՝ կապուած միութենական հանրաքուէի հետ։ Մենք նման իրավիճակի հետ արդէն բախուել ենք եւ գիտենք, որ Ադրբեջանի ժողովրդական ուժերին ներքին խնդիրներից շեղելու համար, Մոսկուան կարող է լարուածութիւն ստեղծել Արցախում։ Ինչպէս յայտնի է, Ադրբեջանի կոմկուսին ընդդիմադիր ուժերը կտրուկ դէմ են հանրապետութեան մասնակցութեանը հանրաքուէին։ Միւս կողմից, մոսկովեան տեղեկատուական աղբիւրները թռուցիկ անդրադառնում են այն հարցին, թէ որքանով է օրինական ռազմական իրադրութեան պայմաններում ԼՂԻՄում հանրաքուէի անցկացումը։ Նախորդ մի քանի օրերի հակիրճ շարադրանքը արցախեան կեանքի հետեւեալ պատկերն է ներկայացնում։

7 Մարտի.- Հադրութի շրջանի Էղիլլու գիւղի անասնապահական ֆերմայից կատարուել է խոշոր եղջերաւոր անասունների գողութիւն։

8 Մարտի.- Ստեփանակերտ քաղաքում կանայք դուրս եկան ցոյցի, պահանջելով անյապաղ ազատ արձակել, կամ այլ կալանավայր տեղափոխել Շուշիի բանտում տառապող հայորդիներին։

8-ը լոյս 9-ը Մարտի.- Անասնագողութեան նպատակով Մուշկապատ գիւղի անասնապահական ֆերմայի վրայ կատարուած յարձակումը յետ է շպրտուել։ Սպանուել են երկու ազերիներ։

Մարտի 12-ին մարզի մի քանի ղեկավարների ստորագրութեամբ նամակ է յղուել Մ. Գորբաչովին, փոխ նախագահ Ենայեւին, Գերագոյն Խորհրդի նախագահ Լուկեանովին։

Նամակագիրները յայտնում են, որ ԼՂԻՄի ժողովրդական պատգամաւորների անունից լիազօրուած են յայտարարելու. «Միութենական մարմինների կողմից Ինքնավար Մարզի սահմանադրական իշխանութեան լիազօրութիւնները շէճանաչելու պատճառով 1991 թ. Մարտի 17ի հանրաքուէի անցկացումը ԼՂԻՄի տարածքում տապալում է։ ԽՍՀՄ պահպանման հարցին ԼՂԻՄի հայ բնակչութեան վերաբերմունքը արտայայտելու նպատակով խորհրդային իշխանութիւնների լիազօրութիւնները ճանաչելուց յետոյ միայն հնարաւոր ենք համարում անդրադառնալ հանրաքուէի անցկացման հարցին»։